

Ամբաս Բաւրաս
 Եմբագրութիւն «Փիւնիկ», Ի
 Աղեփանդրիա



S. Burat
 Rédaction «PUNIG»
 Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՅՍԱՆ

ՏԱՐԵԿԱՆ... 45
 ՎԵՑԱՄՍԵԱՑ 25

ՏԱՐԵԿԱՆ... 15
 ՎԵՑԱՄՍԵԱՑ 8

ՓԻՒՆԻԿ

ԲԱԺՆԵԳԻՆԸ
 ԿԱՆԵՍԻԿ Է
 Ձեռագիր եւ չ'դարձ
 ձուլի

ԿՈՎԿԱՍ
 ՏԱՐԵԿԱՆ ԲՊԼ. 6
 Ազդեր կ'ընդունե-
 ուի՞ն մասնաւոր
 պայմաններով.

ՇԱԲԱՐԱՐԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

2 ՄԱՅԻՍ 1903

ԹԻԻ 32

ԱՐՆԵԼՈՐԳ ԶԷ

Ծանուցանել հետեւեալ նոր կարգադրու-
 թիւնները.

1. Փիւնիկը՝ ներկայ թիւն սկսեալ
 լոյս կը տեսնէ իր ՍԵՓԱԿԱՆ ՏԳԱՐԱՆԷՆ.

2. Փիւնիկը՝ փոխարինելու համար
 ներկայ Գ. շրջանին աւամայ յապա-
 ղոմ'ները, պիտի հրատարակուի շաբաթը
 ԵՐԿՈՒ ԹԻԻ մինչեւ որ տարեկանն ամ-
 բողջանայ:

3. Փիւնիկը պիտի վերածուի ԱՄԵ-
 ՆՅՐԵԱՅԻ, Գ. Տարեշրջանը, բոլորելէ ետ-
 քը, այսինքն յառաջիկայ Յուլիէն սկսեալ:

4. Փիւնիկը ձեռքէ պիտի ծախուի այ-
 սուհետեւ հաար ՔՍԱՆ ՓԱՐԱՅԻ:

Այս այսպէս, կը մնայ շնորհաւորել ե-
 րեւումը քաղաքիս մէջ երկու նոր շաբա-
 թաթերթերու, Փեթմակին ու ԱԶԱՏ ԲԵՄ-
 ԻՆ, երկուքին ալ մաղթելով յարատեւելու
 կորով ու առաքինութիւն, մանաւանդ, պատ-
 կառելի թիւ մը վճարող... բաժանորդներու:

Փեթմակին Տէր եւ Տնօրէնն է, յնոր
 տնօրինութիւն, Տիար Սեփոն Թիւֆէնքճեան,
 Թերթը կ'իյնէ Արսեւիսի տարանէն, Փիւ-
 նիկի ձեռքն ու նիւթակիսն պայմաններովը:

ԱԶԱՏ ԲԵՄԻՆ Խմբագիր-տնօրէնն է առ
 այժմ զինազուլ ըրած ԱԶԱՏ ԽՕՍՔԻՆ Տէ-
 րը Տիար Երասնդ Օտեան, որուն աշխատա-
 կիցներն են մէկէ աւելի անուն շինած կո-
 չումով ու պաշտօնով խմբագիրներ. լոյս կը
 տեսնէ ամէն շաբաթ Արաբիա տարանէն:

ՕՐՈՐԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Ձեթուն ու Եգիպտոս. Համաիրանքի հո-
 սանք մը. Երկու Բարեգործականներ.

Սուրիացի'ն թէ Հայը. Հայ բաշան:

Ձեթունի որբերուն աղաղակը զուր չար-
 ձրացաւ, ծաղիկատին դուժն Եգիպտոս ցըն-
 ցուեցաւ, յուզուեցաւ Ազեքոսանդրիան, չուշա-
 ցաւ, չլծերացաւ իր պարտքը կատարելու մէջ,
 չուտով հիմնուեցաւ ԲԱՐԵՄԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒ-

X

ԹԻՒՆԸ, մէկ շաբթուան մէջ հարիւր ու հարիւր անգամներ արձանադրուեցան, մէկ երկու շաբթ յէտք եղաւ խմբագրելու հիմնական կանոնագիր մը, մէկ երկու անգամ նիստեր տեղի ունեցան, ընդհ. ժողովի մը քուէներով ընտրուեցաւ առժամեայ գործ. ժողով մը, երեք ամիս միայն պաշտօնավարելու համար: Կանոնագիրը, վերջնական ձեւին վերածուած, պիտի ներկայացուի ամսոյս տասնին առաջիկայ կերակի ցերեկը տեղի ունենալիք ընդհ. ժողովին, վաւերացուելու համար, ու յետոյ, տպագրուելով, պիտի բաշխուի բոլոր անդամակիցներուն և պիտի զրկուի նաեւ արտասահմանի ամեն հայաբնակ կեդրոններուն:

Անգամ մը կանոնագիրը հրապարակ նետուած, պիտի կազմուին մէկէ աւելի մասնաճիւղեր, զանազան հայ զազութներու մէջ:

"Փիւնիկ"ի նախակոչը շուտով գտաւ ջերմ ընդունելութիւն, զէպ ի Ղեռն սրբուկները համակրանքի հոսանք մըն է սկսաւ, տարածուեցաւ: Առաջիններն եղան, մեր արտասահմանի եղբայրակիցներէն, Սրբմնին ու Անահիտը: Մեծանուն Տ. Չերագ, ապրիլի թիւովը գեղջուկ որբուկի մը սիրուն պատկերին տակ, «Աղէտ ի Զեթուն» վերնագիրը գրած ու հոն ամփոփած է փիւնիկի քսանըմէկ փետրուարի թիւին առաջնորդողը, խառնելով անոր իր տաք շունչը, թելադրական սողերու մէջ. յետոյ, իր որջան անկեղծ նոյնքան մաքուր ներշնչութենէն խրախուսուած, ձեռնարկած է — թերթին հիմնարկութենէն ի վեր առաջին անգամն ըլլալով — Զեթունի համար հանգանակութեան մը, որուն առաջին ցուցակը ծածկած է իր իսկ նուէրը, հարիւր Ֆրանգ:

Իսկ Անահիտը. յիշ շեշտէ փիւնիկին կոչը, «պէտք է օգնել Զեթունի» վերնագիրը կրող մասնաւոր յաւելուածով մը, ծայրէ ծայր գիտակից հայրենասիրութեան մը խանդը մասնող սողերու մէջ:

Փա՛ռք իրենց, մամուլի պատիւը բարձր

բունող այդ անխոնջ մշակներուն, որոնց անփոխարինելի հաճոյքն է գրել ու զրել միայն՝ վառ պահելու համար մեր սուրբ դատը, գրել՝ անպատկառ զիւանդիտութեան երեսին քողը պատուելու համար, ծովերուն ու ցամաքներուն վրայ հայ Զարչարանքը պարտցնելու համար. փա՛ռք իրենց որոնք ուխտեցին մինչեւ յետին շունչերնիդ գրել՝ ազդարարելու համար Եւրոպային՝ իր պարտազանցութիւնը հանդէպ բանտաբաւած իրաւունքներուն:

Ու երբ անցին, Արեւուտքին ծայրը, պիտի ուզէիր ցերիդ փողերովը հարբենալ, ասդին, կոկորդիլաններու աշխարանքին մէջէն, արեւատանջ Աւազուտին երկայնքը, կը դատապարտուիս զիտելու նոյն ցեղիդ խաղաթիւնները. անճոռնի՛ հականկար...:

Չե՛ս կարմրիր, չե՛ս դողար, չե՛ս փրփրիր, չե՛ս յուսահատիր, երբ իրենց խաւ խաւ աղտերը պարանոցնին, երեսներնուն սեւն ու կաշին ամէն օր. փողոցներն ու դորձատեղիները ցուցադրող, իրենց անխուսափելի հասակովը զիմացց գցուող այդ Հապարի թոռները իրենց միւշախմամբ բարեգործականին թեւերուն մէջ, վազը պիտի վրայ նային ու — եթէ չը խնդան — պիտի խղճան...: Ի՞նչու. — Որովհետեւ, իրենց Բարեգործականը, երկրորդ նախախնամութիւն, կը զործէ իրենց համար, կը մեծնայ տարուէ տարի, կը հարստանայ, կ'ընդարձակի ու օրին մէկը, շատ մօտիկ օր մը, տէր պիտի դառնայ Նեղոսապարգեւ հովտին մէջ, բանի մը տասնեակ հազար ֆէլաններով հողերու...: Եւ այդ աւելցած ֆէլանները պիտի պակսեցնեն թշուառ ֆէլլահներուն թիւը...:

Իսկ հայ բարեգործականը, մեր Աղքատախնամը, տարուէ տարի Զիճինիա կը տանի պարզել, ցուցադրել իր բոլոր պերճանքը, տարին երեք հարիւր ոսկիի կլորիկ եկամուտ մը ձեռք ձգելու համար. յետո՛յ, շաբթէ շաբթ Աղքատախնամին սենեակը տանող սանդուխէն եղնել իջնելով սկսող շիկ-

նոտ ու ամչկոտ ազգայինները մուրացկանու-
թեան վկայեալ կը հանէ, տարուէ տարի անցող
յառաջատուութեան օրէնքով բազմապատկե-
լով արհեստով մուրացկաններուն թիւը,
մինչդեռ առկին, անծանօթ ու անմարդա-
ձայն անկիւն մը, պարկեշտ կեանքեր կը
փճանան մերկ, անօթի՛. մինչդեռ փողոցնե-
րուն երկայնքը քանի՛ քանի ապագայ խօս-
տացող երիտասարդներ, պարզ դատարկա-
շըրջիկներու պէս կը քաշկոտեն իրենց ա-
նա՛րդ զոյւթիւնը, չը գտնելով գործ մը կամ
պաշտօն մը:

Միւսլիման պէյերը, բաշաները, հա-
նըմները զերար կը գերազանցեն ֆէստան
մը հող աւելի նուիրելու համար իրենց Բա-
րեգործականին, որ դեռ անցած տարի բա-
ցած զպրօքը զստարտն մ'ալ կ'աւելցընէ
այս տարի. որ, մէկ խօսքով, հինգ հազար
ոսկիի տարեկան զուտ հասոյթ մը կը
բանձէ:

Բայց միւսլիմանները, պիտի ըսէք,
րնիկ պէյերն են երկրին, իրենց վեհապե-
տին արիւնձն, հողատէրներ կը հաշուեն հա-
զարներով, ու իրենք միլիոններ կը կազմեն
թիւով:

Թողունք ուրեմն միւսլիմանները, անց-
նինք Սուրիացիներուն, Դամասկոսի երէկ-
կոտան ջարդէն փախստականներուն ու իրենց
սրբիներուն:

Ի՛նչ էին. ի՛նչ եղան, ի՛նչ ունէին,
ե հիմայ ի՛նչ ունին:

Կ'ուզե՞ս պարզ դադափար մը կազմել
այս նորեկներուն նկարագրին, բաղձանքնե-
րուն, իրենց զիրքին, ազգեցութեան ու ի-
րենց ապագային մրայ, այցելէ՛, մայրաքա-
ղաքէն սկսելով, Եգիպտական բոլոր կառա-
վարական հաստատութիւնները, մեծ ու
պզտիկ պաշտօնատունները. վեր, վար,
ներսը, դուրսը, մարախի պէս բռներ են.
պարտէ՛ դատարանները, հո՛ն է Սուրիացին,
թարգման, գրագիր, փաստաբան, գատաւոր.
մտի՛ր Ոստիկանատունը, հո՛ն է ան, ան
հրաժեշտ մարդուկը, լրտես թէ ոստիկան.

բոլոր թաղապետական շրջանակները, գրա-
մատունները, երկաթուղիները, ս'իբր պաշ-
տօն կայ, հո՛ն է հո՛ն, ամենուրեք Սու-
րիացին. եթէ թույլմաս առաքեալն մօտիկ
ազգականներէն ես, դժուար կը հաւտաս,
Շաքուր բաշային հարցուր:

Է՛հ, մենք ալ ունինք հոս մեր պէյերը,
մեր բաշաները, մեր հողատէրները, մեր
զրամատէրները, մեր խնամակալները, մեր
.... դեռ շարենք....:

Ասոնք իրենց ցեղովն ու ցեղին ցա-
ւերովը վայրկեան մ'իսկ տատապելու չուփ
տխմար չ'են. ասոնք իրարու հետ կ'իյնան
լոկ իրարմով կը զբաղին. հասարակութեան
միւս անգամները, հասարակ մահկանա-
ցուններ, իրաւունք չ'ունին բան մը սպասե-
լու, իրենց ազգեցութենէն ու զիրքէն: Ա-
նոնք, վիշեր ցերեկ փառք թող ստն սր ի-
րենց պէյ ու բաշա պէյերը շնորհած են
թոռներուն ձրի եկեղեցի մը, ձրի վարժա-
րան մը, ձրի գետններ ու ձրի գերեզմա-
նատուն մը, են:

Թո՛ղ տաղանդաւոր հնարիչներ, կա-
ռավարութեան մրցանակովը փրօտաւորուած
թէեւ, իրենց զիւտին մենաշնորհը ծախելու
տախտուած, աստու իրիկան սլքտան Առաջ-
նորդարանին պատերուն քովերը, պէյին կամ
բաշային հզօր պաշտպանութիւնը ինչորիւր
համար, օրերով, շաբաթներով, ամիսնե-
րով թո՛ղ սպասեն ու ի վերջոյ վճարուին,
հող չէ՛, պէյ են, բաշայ են, իրաւունք ու-
նին այնպէս ընելու:

Այս գոյնգոյն պատկերին շրջանակ
մը անցընելու համար օրուան մեծ պէպքը
պատմենք ու վերջացընենք:

Երէկ թէ առջի օրը Տէսուռնէի մէջ
դաշտահանդէս մը կուտայ բարէ բաշան և
մասնաւոր շողեկառք մը տրամադրուած,
կենցաղադէտ հինընկալներէ ողջաբուրած,
երկսեռ մէկ ու կէս հարիւր կոչնականներու
սեղան մը կը սարքէ. Հայր Աբրահամու
սեղան մը. խաղք և խրախճանք երբ կը
գտնեն վախճան, բովանդակ Եգիպտոսին

մէջ իր առատաձեռնութեանը համար համբաւ շինած կոչնատէր բաշանիս՝ դաշտահանդէսին յիշատակը յաւերժացնելու համար սեղանէն վերջը՝ ազամանդ, ոսկի, մարգարիտ, կը ցանէ բազմաւոր բարբիշներու գլխին . . . :

Անունովդ ապրիս, ժամանակակից նտհապետ . . . : Հոգ չէ՛ թո՛ղ անօթի մեռնին հայ սրբերն ու այրիները . . . :

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Այս վերջին քսան քսանհինգ աստիներու ազգային պատմութիւնը հայ ցեղին գոյութեան բովանդակ պատմութիւնն է որ իր մէջ յատակօրէն կը ցոլացնէ մեր անցեալի ու ներկայի մեր մտաւորականի և բարոյականի պատկերը իր հարազատ գոյներովը .

Եւ մեր ներկայ հասարակական կեանքը, որչափ որ մեր աչքին պատկերանայ տգեղ ու գոեհիկ, այսու ամենայնիւ նա կրած է իր մէջ որոշ կերպարանափոխութիւն՝ համեմատաբար աւելի ազնիւ և մխիթարական քան անցեալ հինգ վեց հարիւր տարիներու պատմութիւնը: Ի՞նչ էր մեր կեանքը անցեալին մէջ. օրինակ առնենք մեր հին գրականութիւնը որ ուրիշ բան չէր բայց միայն կրօնական զգացումներու և վերացական մտքերու յուսահատ բացազանչութիւն մը, որ հայուն երազն ու իտէալն էր. հայ միտքը շրջափակուած ու կաշկանդուած էր մահացնող մթնոլորտով մը որուն էն խիզախ ներկայացուցիչները հանդիսացան քարայրերու մէջ իրենց գոյութիւնը ուրացող ճգնաւորներ և կուտակրօններ. հետաքրքիր եղողները թող ուշադրութեամբ հետևին պատմութեան այդ երկար շրջանին որուն նկարագրութիւններովը հարուստ են մեր վանքերու գրադարանները: Իսկ վերջին քարոզ

դարու հայ կեանքը, շնորհիւ ներքին և արտաքին մղիչ ազդակներու, ընդունակ հանգիսացաւ ըմբռնելու ժամանակին ոգին և կեանքի գոյութեան պայմանները: Այդ թուականներէն սկսած՝ մասնաւորապէս հայ գրականութիւնը նոր կեանք, նոր կերպարանք ստացաւ. նա դարձաւ հայուն մտքին, զգացումներուն և ձգտումներուն հարազատ թարգմանը: Հայ բանաստեղծը, այլևս, փոխանակ վարդն ու սոխակը երգելու, սկսաւ իր զգայուն քնարին վրայ թրթռացնել հայրենիքի ազատութեան յոյսն ու սէրը. համհրապարակագիրը, հայ վիպասանը, մէկգի նետած կրօնական անվերջ ու անլուծելի հարցերը, սկսան ազատ ու մարդավայել կեանքի գիրքը քարոզել, հայ ստրկին միտքն ու զգացումը հրդեհել և փոթորկեցնել կեանքի ստրկացնող պայմաններուն վէմ. ցոյց աւել հայուն որ ինքը ստրուկ և գերի է թէ՛ մշտաւորապէս թէ՛ բարոյապէս և թէ՛ ֆիզիքապէս և թէ՛ այդ կեանքէն դուրս՝ այս աշխարհին վրայ կայ աւելի ազատ, բարեկեցիկ և երջանիկ կեանք մը: Դարաւոր հայ ստրուկը թմրած ու ընդարմացած հայը՝ իր ջանքերուն և թէ իր կեանքին մէջ ծագած սնտեսական եւ ընկերական նոր պահանջներուն շնորհիւ հետզհետէ սկսաւ շարժիլ և զգալ իր կեանքին բեռան ծանրութիւնը. ըմբռնեց հայը թէ իր կրած ագէտները երկինքէն չէին գար, ինչպէս որ քարոզած էին իրեն գարերով. հասկցաւ իր միակ յանցանքը, իր մեղքը որ ոչ թէ պահէն ու ծոմը պահէն ու չի պահէն էր, այլ որովհետեւ իր մէջ մեռած է մարդկային եւ ազգային ամենատարրական իրաւունքներու գիտակցութիւնը. այլ որովհետեւ իր մէջ ընդարմացած է արժանապատուութեան և վրէժխնդրութեան զգացումը. տեսաւ հայը որ ինքը իր հայրենի երկրին մէջ հայ չէ, մա՛րդ չէ, այլ ստրուկ մը, մուրացկան մը, գրաստ մը քստեղծուած սոսկ ուրիշին ծառայելու հա-

մար... Հայուն այս ինքնաճանաչութեան փրկարար հոսանքը բղխած հայ հոգիէն, հայ ծոյէն, սկստ. պտուտիլը հայ ինտէլիգէնտ շրջանին մէջ և թափանցիլ ու տարածուիլ ամբոխին բոլոր ծալքերուն մէջ զոր պէտք էր յորձանք կազմած իրերու բնական ընթացքով, արտայայտուէր և որ արտայայտուեցաւ. ժողովրդային հզօր և անկաշկանդ շարժումներովը: Այդ շարժումներովը հայը ներկայացաւ բողոքող, ըմբոստ տարր մը քաղաքական թատերաբեմին վրայ: Այդ շարժումները մարմնացուցած դարեւոր ցաւերն ու ձգտումները բայց այս անգամ ոչ թէ լացող, պաղատող, այլ կռուող և պահանջող հայուն: Այդ շարժումներուն շնորհիւ հայ կրօնական համայնքը ստացաւ ազգային—քաղաքական կերպարանք և դարձաւ Արեւելեան հարցի կարեւոր ազգակներէն մէկը: Այդ շարժումները թէև սկիզբը թոյլ ու տկար բայց հետազհետէ կը դառնան հզօր և յարատեւ, որովհետև այդ յեղափոխական շարժումները այս կամ այն անհատի, խմբի կամ կուսակցութեան արհեստական գործը չէին և չէին կրնար ըլլալ և ոչ ալ խարուսիկ երեւոյթ մը, այլ հայ ժողովուրդին քաղաքական, տնտեսական և ընկերական կեանքին մէջ ծագող նոր պայմաններու պահանջ մըն էր՝ հրամայող և տիրական. հետեւաբար այդ շարժումները չէին կարող կասեցուիլ ոչ հայ ստրկամիտներու վայնասուններովը և ոչ ալ Մեծ Մարզասպանին գործած աւերովը որով կը ջանայ խեղդել այդ շարժման անյողզողը քայլերն ու մտունները: Այդ յեղափոխական շարժումները, հակառակ իրենց ճամբուն վրայ ցցուած ուռիների անտառներուն, հակառակ իրենց առջեւ նետուած հարազատներու գազանաբար յօշոտուած զլուխներուն, պիտի շարունակեն իրենց քայլերը տիրանալու հայրենիքին և իրաւունքին, առանց որոնց հայը դատապարտուած է քաշկոտել ստրկի անարգ կեանքը իր բնատուրներուն ոտից տակ:

Իսկ հիմակ որ թուրքիոյ քաղաքական հորիզօնը մթագնած է սպանալից ամպերով, հիմակ աւելի քան երբէք ժամանակն է որ հայը զինուորուի, պատրաստուի տրուած բուսկին միահազոյն հարուածը իջեցնելու թիրք մարդակեր պառաւ գազանին դիմուն որ տակաւին իր գազանային խրախճանքը կը կատարէ հազարաւոր հայ դիակներու շուրջը. որ անյագաբար թափեց ու լափեց հարիւր հազարաւոր անմեղներու արիւնը որ մայրը իր որդուցը առջեւ բռնաբարեց, զաւակը իր մօրը առջեւ մորթեց, հայրը իր զաւակաց առջեւ յօշոտեց... որ այրեց, քանդեց, պղծեց հայուն օճախը, հայրենիքը պատին ու եկեղեցին և տակաւին հայն է որ պիտի լռէ. հայ երիտասարդն է որ պիտի նախընտրէ այս անարգ, քանդուած, բլրքատուած ու պղծուած կեանքը՝ կոխէն ու զինուորի մահէն:

Շատ հեռու չէ փորձաքար առիթը:
Գաւիթ, 1903 Ապրիլ 21

ԱՐԱՊԻ

ԱՐԵՎԵԼԻ ԼՍՅԵՐԸ

Յունաստանի փսքրաթիւ հայ գաղթականութիւնը, մեծ մասով աշխատուար գասակարդէն, աղնիւ ու հպարտ դգացումը կունենայ հիմնելու Աթէնքի մէջ ազգային եկեղեցի մը, ազգային դպրոցով մը: ՎԷՏ. Հայրիկը շուտով կանգակ մը կը զրկէ Ազգ. Պատրիարքարանն ալ իր յանձարարութիւնը կը կցէ այրապետական կանգակին. և Աթէնքի բարի հովիւը, Արժ. Տ. Խորէն քհն. Մուրաբան, ճամբայ կիյնայ դէպ ի Բուսանիա, կը պտըտի, կը հանգանակէ ու այսօր մեր մէջ կը գտնուի:

Ստորեւ կը հրատարակենք պաշտօնական գրութիւն մը, հանգանակութեան ցուցակով մը, երկուքն ալ պերճախօս հեր-

քում ներեն վերջերս Պալկարիոյ Շարժում
թերթին. մրտած աղտոտ յօղաւածներուն,
որոնք կերևայ թէ հրոպարակ նետուած են
պարզապէս Տ. Խորէնի պէս պարզուկ, ար-
թուն ու բարեջան քահանայ մը բարսյապէս
մեղմեցու զիտումով:

Աթէնք, 1 Մարտ 1903

Մեծապատիւ Տիար Տնօրէն Փիւնիկ լրագրոյ
Աղեքանդրիոյ

Վաճառի Իրաւունք լրագրոյ վերջին թի-
ւերուն մէջ ֆէօսթէնճէի հոգաբարձութեան
կողմանէ հրատարակուած է անդեկագիր մը,
ամբաստանելով Աթէնքի հովիւ Արժ. Տէր
Խորէն քհն. Մուրատեան, իբր թէ Բումանիոյ
մէջ ի նպաստ տեղւոյս Եկեղեցոյն և նախա-
կրթարանի շինութեան հանգանակուած գու-
մարէն հազար ֆրանքը լւրացուցած եւ
մտնած է ֆէօսթէնճէի հիւրանոցի մը մէջ
անպարկեշտ վարմունքով:

Եթիւ խօսքով ապացուցանելու համար
թէ ո՛րչափ անհիմն այնչափ ստայօզ է այդ
զրպարտութիւնը և պարզապէս անձնական
թշնամութեան հետեւանք Տէր Խորէն քա-
հանային զէմ, հոգաբարձութիւնս հրապա-
րակաւ կը յայտարարէ թէ՛ Բումանիոյ հան-
գանակութեան արդիւնքը 1961 ֆրանք և
միթոսն սանդիմ ամբողջապէս ստացած է
Տէր Խորէն հայրէն և կը ինդրէ սր բարե-
հաճիք նաև հրատարակել հանգանակութեան
ցուցակը ի սէր ճշմարտութեան և ի միա-
մտութիւն բարեպաշտ նուիրատուաց:

Հաճեցէք ընդունել մեր ևն, ևն:

Ի յիմաց Հոգաբարձութեան
Ատենադպիր Ատենապետ
Ալիքսան Գ. Եազըճեան Կ. Աղաբէկեան

ՅՈՒՅԱԿ ՀԱՆՔԱՆԱԳՈՒԹԵԱՆ
ԲՈՄԱՆԻՈՅ ՄԷՁ

Ի նպաստ Աթէնքի եկեղեցոյն և վար-
ժարանի Շինութեան

Արժ. Տ. Խորէն քհն. Մուրատեանի ձեռքով

Սուրինա	257	70
Թուրքայ	62	50
Պապատաղ	55	
Կալաց	185	
Թէքուճ	77	
Պէրլաս	56	
Եաշ	60	
Պոթուշան	258	
Բոման	129	
Պաքով	42	
Ֆօքշան	100	
Պրայլա	198	
Պաքըշ	322	
ֆէօսթէնճէ	114	40
»	28	
» Չէրօ Վօտա	22	

Ֆրանք 1961 60

Ինչպէս ըսինք, Տէր Խորէն հիմայ
հոռ է, Ս. Պատրիարքին կոպէն շերմապեո
յունձնարարուած, Գահիրէ, Ս. Առաջնորդին
հաւանութեամբն ու անդին Աւագերէց Տէր
Մամբրէ Հօր ընկերակցութեամբը կը յաշո-
զի հաւաքել բաւական կարեւոր գումար մը,
նոյնպէս հոս, Աւագ-Երէց Տ. Յարութիւն
Հօր ընկերակցութեամբ, առաջ կը տանի
հանդանակութեան կարեւոր գործը: Վսեմ.
Աբրահամ Բարթող բաշան և ուրիշ բարե-
կեցիկ ազգայիններ ստորագրած են արդէն
կլորիկ գումարներ: Յաջորդ թիւով պիտի
հրատարակենք եզրուած կանգանակու-
թեան մանրամասն ցուցակը: Սակայն, տ-
մեն եզրուածայ պէտք է փութայ մաս-
նակցել, պէթ քար մը զրած ըլլալու համար
տին սուրբ կառայցներուն, որոնց ծոցը պիտի
պահպանուի ու յաւերժանայ մեր ցեղին գո-
յութիւնը: Բարիդէ ս՛ջ նուազ կարեւոր է
Աթէնք, հոյ զաղթականութեան համար:

Ունենանք հոն, եկեղեցինիս ու զըպ-
րոցնիս, չը մոռնանք մեր պապերուն ու
բաճն ու պաշտածը:

Ուր սր ալ երթանք, հայ ապրիւնք ու
հայ մեռնիք:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒԻՆԵՐ

ԳԱՅԻՐԵՆ կը գրեն թէ վասպուրականի Որբախնամ Ընկ. տարեկան Ընդհ. Ժողովը Մարտի 29ին տեղի ունեցած է Գեր. Առաջնորդին նախագահութեան տակ և ներկայ շրջանին համար Մայր Դիւանին ու Գործ. Ժողովին ընտրութիւնները կատարուած են սալով հետեւեալ արդիւնքը.

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

Տեարք

- Եւստօֆ Պէյ Ազիզ Ա. Ատենապետ
- Յակոբ Պոյաճեան Բ. »
- Աւետիս Ամիրայեան Ա. Ատենապարտ
- Արտաշէս Հաճընեան Բ. »

ԳՈՐԾ. ԺՈՂՈՎ

- Գ. Իսաղուլեան Ա. Ատենապետ
- Ա. Բաբազեան Բ. »
- Յ. Մարգարանեան Քարաուզար
- Ե. Աւագեան Գանձապահ
- Լ. Էսմէրեան Հաշուակալ
- Տ. Պուտազեան Խորհրդական
- Ս. Սարգիսեան »

Այս գեղեցիկ արդիւնքը շնորհաւորելէ յետոյ, կոչուած կընենք Աղեքսանդրիոյ բարեօրէր հայրենակիցներուն որ փութան, իրենց կարգին, աջակցել ջանքերուն վասպուրականի Որբախնամին, որ 1899 Մայիսին կազմուած ի Գահիրէ, կը պահպանէ ու կը պատարակէ բնաշխարհին մէջ քսաներկու որբեր, որոնց վստահ ենք, պիտի այս տարի բազմապատկուի թիւը, նորընտիր Գործ. Ժողովին անձնուէր անդամներուն եռանդովը:

— Գահիրէի Գալատեան վարժարանին աշակերտուհիներէն ընտրուած երգեցիկ երամ մը, Աւագ-Հինգշաբթի ցերեկուան պատարագին «Ձերգո հոգեւոր» եղանակեց խորանին վրայ. հաւատացեալ բողոքութիւնը շատ զգածուած էր տեսարանէն: Երկուսու հայութիւնը կ'աղօթէ հրապարակաւ. Աստուած նորէն խուլ կը մնայ:

— Կիպրոսի մէջ ի նպաստ քեթուի հանգանակութիւն մը բացուած և մինչեւ ցարդ քսանեւէինք ոսկիի գումարի մը հոտած է: Ապրի Կելիկիոյ գրացի կղզին:

Տէր Սահակ ա'լ պիտի չը բահանայազործէ հոռ, հրաժարա՞ծ թէ հրաժարեցուցուած է. միեւնոյն բանն է, կը պատրաստուի մեկնիլ Նոր Աշխարհը:

Տիրացու Միհրանն ալ կերթայ կոր, առաջիկայ ուրբաթ օրուան Մէսածըրիով պիտի մեկնի հոս, ընաանիքով:

Թանի և ուրիշ կարեւոր թերթերու մէջ կը կարգանք որ վերջերս հայկական գաւառները մասնաւոր հրահանգներ զրկուած են հայոց հետ անաւշ վարուելու. բայց միւտ կողմէ, կը տեղեկացրուի թէ քուրտերը՝ Կարնոյ Հերտիֆ հայ վազը թալլնր, շատ մը բնակիչներ սպաններ ու շորս աղջիկ առեւտնդեր են:

Պատրիարքը վերքէն բուժուելէն ետքը, Սուլթանէն ընդունուեր է և առիթէն օգտուելով անոր բազմաթիւ սովորական իրօքէններուն զործադրութիւնը խնդրեր է, Սուլթան Համիտ խոտացեր է, ինչպէս ուրիշ անգամներ, Մեծ Վէզիրին հարկ եղածը հրամայել:

Տեղին անձկութեան պատճառով յաշորդ թիւին յետաձգեցինք շարունակութիւնը մեր նախորդ հիմնադրուածին, որ «Խնամակալութիւնը լուծուեցաւ» վերնագիրը կը կրէր:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ հարցը օրէ օր կը կնճոռաի, թաւրք զօրքերու և յեղափոխներուն միջեւ ընդհարումները կը յաճախեն, բնգհ. ապրտամբութիւնը պայթելու մօտ կը թաւի:

—ՍԵԼԱՆԻԿԻ ՕՈՎ. գրամատան վրայ առններկա հոգինոց խումբ մը յարձակեցաւ ապրիլ 29ին իրիկունը, այրեցին շէնքը, շատեր սպաննուեցան, ու շատեր ձերբա- կարուեցան:

—ԱԼՊԱՆԻԱՑԻՔ անդրգուելի կը մնան, կը մերժեն ամեն բարենորոգումի ծրագիր, իրենց անկախութենէն ու ինքնավարութենէն զատ բան չեն ձանձնար: Սուլթանը շուա- րած է:

ՍԵԼԱՆԻԿԻ ՕՈՎ. դրամաանէն զատ Մի- տիլլի դրամաանն ալ այրած են: Շատ մը յարձակողներ կառքերով զլխաւար փո- գոցներէն անցնելով ուումբեր նետած են սրճարանները:

Մէսաժըրի «Կուստալքիլը» շոգնաւը օգը հանած են: Երկու հազար զօրքեր հա- ոան, երեսուն պուլխարներ ոպաննուեցան, Նէվրօքօրի մէջ. սագնապը կը հանդարտի:

Տինամիա գործածողները կեզրնական գօմիթէի անդամներէն էին ապահովապէս. ումբ ունենալնին առաջուրնէ գիտէր կա- ոավարութիւնը, բայց անոնց գաւերուն յան- դրդնութենէն սարսափեցաւ. հիմայ ստուար թիւով ձերբակալումներ կը կատարուին, ընդ ամենը յիսուն ումբ նետուած են փո- գոցները, բայց աւերները մեծ չ'են, իստ- ճապ սագնապը կը ծաւալի:

ՀԱՅ ԾՆՈՂՔՆԵՐՈՒՆ

ԱՐՆԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՈԹԻԿ ԿՐԹԱՏՈՒՆ

Լոյան, Զուիցերիա

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Արեւելեան կամ հայկական կրթատունը կ'ընդունի 10էն 20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ, ծնողքներու բազմանքին հա- մեմատ, գիտական, քրական, առեւտրական կամ արհեստագիտական առողջ ու հիմնաւոր կրթութիւն մը, ներդաշնակօրէն միացած ազգային հիմնական գաստիարակութեան մը հետ: Մեր հայ աշակերտներուն կ'աւան- ղենք, և այս՝ առանց ուր է վճարումի՝ հայերէն լեզու, հայ. պատմութիւն, հայ. մատենագրութեան պատմութիւն, ևն:

Արեւելեան կրթատան տարեթոշակը, հակառակ իր ընծայած բազմաթիւ իրական առաւելութիւններուն, անմրցելի կերպով չա- փաւոր է:

Հայ ծնողներու հաւնար մասնաւոր պայմաններ: Ընտանեկան կեանք:

Կրթատան յայտագիրն ամեն ուզողի կը ղրկուի:

ՏՆՕՐԷՆ Մ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Տօքթ. Ի Գիտութիւնս

Համալսարանական մասնաւոր Ուսուցիչ



Թէլէֆօն թիւ 33

Նամակատուի թիւ 398

ԶԱՆԱԶԱՆ ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐ • ԳՈՋԱՐՆԵՐ • ԱԴԱՄԱՆԴ • ԱԿՆՈՑՆԵՐ •

L. KRAMER & Co

Հայրաքիչ Ն. Խ. Բարձրութեան

ՄՈՒՍՔԻ ՓՈՂՈՑ • ԳԱՋԻՐԷ • ԵԳԻՊՏՈՍ

ԳՈՐԾԱՑՈՒՆ ԳՈՂԱՐԵՂԻՆԱԳ

Տպարան փիւնիկ